ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

օգոստոսի 2021 թվականի №Ա
ք.Երևան

«ԱՅՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի մարտի 25-ի №83Ա որոշմամբ «ԱՅՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Այսոլար» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0668 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0668 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2020 թվականի նոյեմբերի 26-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), սակայն չի ներկայացրել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2021 թվականի հուլիսի 26-ը,

բ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու

դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

գ) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,

դ) Ընկերությունը մինչև 2021 թվականի հուլիսի 26-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ուստի Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, սույն թվականի հուլիսի 27-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում փաստարկներ և հիմնավորումներ չի ներկայացրել,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0668 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2021 թվականի հուլիսի 26-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0668 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի փետրվարի 28-ի №COD/0345 գրությամբ Հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6 250 000 (վեց

միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2022 թվականի հունվարի 24-ը գործողության ժամկետով:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.

1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0668 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2021 թվականի դեկտեմբերի 10-ը.

2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0668 լիցենզիայի գործողությունը կկասեցվի.

3) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
օգոստոսի 2021թ.